ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԽԱՂՈՂԻ ԵՎ ԳԻՆՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
INTERNATIONAL ORGANISATION OF VINE AND WINE (OIV)

Խաղողի և գինու միջազգային կազմակերպությունը ստեղծվել է 2001թ. Ապրիլին՝ Փարիզում կնքված միջազգային համաձայնագրի հիման վրա: Այն գիտական և տեխնիկական բնույթի միջկառավարական կազմակերպություն է, որը հնարավորություն է տալիս տեղեկատվություն փոխանակել խաղողի և գինու արտադրության բնագավառում գիտական, տեխնիկական, տնտեսական և իրավական հարցերի շուրջ: Ներկայումս կազմակերպությանն անդամակցում է 47 պետություն: Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է կազմակերպությանը 2015 թվականից:

Կազմակերպության հիմնական նպատակներն են. տեղեկացնել իր անդամներին այն միջոցառումների մասին, որոնք իրականացվում են խաղողագործության և գինեգործության ոլորտի արտադրողների, սպառողների և այլ մասնակիցների կողմից, աջակցել գոյություն ունեցող գործընթացներին և ստանդարտների ներդաշնակեցմանը միջազգային պահանջներին, անհրաժեշտության դեպքում նոր միջազգային ստանդարտների նախապատրաստմանը, բարելավել խաղողագործության և գինեգործության արտադրության և շուկայահանման պայմանները: